



ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Նրա անյունը Հայաստան տանելու առթիվ

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
 Դիակառքիդ մոտից գարունն էլ, ահա, ծամերը թափած,
 Սահում է կամաց, մատները դնում երկնակամարի
 Սրինգների բյուրեղ ձայների վրա,
 Որ ճառագայթի ճակատոյ ըմբոստ:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
 Վաղը, երբ պառկած երկաթե գրկում անհամբեր նավի,
 Կերթաս ծովերով, խելառ ծովերով այս մոլորակի,
 Դագաղիդ գլխին հովեր կքայլեն,
 Եվ ալիքների խմբերը՝ հուզված ծովի լարերից
 Մի հսկայական քնար կհյուսեն
 Ե՛վ շառաչելով, և՛ դլրդալով կհովվերգեն նավի կողերին երեր...
 Հանկարծ կցցվեն հունական երկրի վայրերից կախարդ
 Սովերներ մեծաշուք, սովերներ հումկու և արշալույսի
 Փերուզ արյունից, արծաթից սարսող ձիթենիների
 Եվ երկինքների լազուրից պայծառ մի երգ կհյուսեն
 Եվ քեզ կօրորեն վերջին օրորով:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...
 Ա՛հ, գիտեմ, գիտեմ, դառն վայրերից անցնելու պահին
 Քո կույերի տակ մի գիշեր կուլա, կծկված բերանիդ

Ծայրից դողալով մի կաթիլ արյուն վայր կիջնե նորից...

Սև ծովի բուքը կհևա դողող...

Մեծ աղաղակներ կհասնեն նավին և քեզ կկանչեն:

Եվ այդ հույզերը, փոթորիկը այդ անողորմ ողբի

Հիվանդ ուղեղիդ վերջը կբանան, և կխենթանաս:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...

Բայց այդ կլինի հիշատակ վերջին, այս բիրտ աշխարհի

Հիշատակ վերջին: Վերջին մղձավանջ, վերջին սև տեսիլք,

Որի դանակը մորթել էր երգդ և սիրտդ փակել թանձր խավարում:

Հետո, վարդապետ, լսո՛ւմ ես ձայնը տարագիր սրտիս,

Հետո, վարդապետ, կգա վեհաշուք, պայծառ գմբեթը հայոց աշխարհի

Եվ կբարձրանան լուսե խմբերի երգեր աննման...

Անհամբեր շարքով քեզ կբոլորեն լեռները մեր վեա,

Դաշտերը մարմանդ, դալար սեզերը, ձորերը մեր խոր,

Ոսկե կոկորդով կլկլան, ուրախ աղբյուրները մեր,

Ծառագայթների բամբիռը զարնող գետերը զվարթ,

Եվ դա կլինի համերգ մի հսկա, որի նմանը չի լաված երբեք

Եվ ոչ մի վայրում: Մի դաշնակություն, որի մեղեդին

Գալիս է հնչում հողերի կրծքից, սարերի կանաչ բորոգաների

Կանչող հմայքից, ձորերում ձայնող խուլ թմբուկներից,

Դաշտերում սահող մեղմ ջութակներից և այն զանգերից,

Որոնք հնչում են, երբ մեր արևը կաչում է ժայռին,

Եվ վայր է թափվում խուլ ջրվեժների դողանջը արծաթ,

Եվ դա կլինի համերգ մի հսկա, որի նմանը չի լաված երբեք

Եվ ոչ մի վայրում: Դիսկանտներ ոսկե, բուստներ խորունկ,

Կաղամախիների խշռոցներ խորհուրդ, բաղերի ծոցից

Եկած շրշուններ, հասկերի գլխին սահող լեռնոտներ,

Եվ ալիք-ալիք խոտերը շարժող ֆուգան հովերի՝

Կզան, կկանգնեն, և հոգուդ խորքի չերգված երգերից

Հայոց աշխարհի բոլոր ձայները կհամերգեն նորից:

Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...

ԵՂԻԾԵ ԶԱՐԵՆՑ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ

Հատվածներ

Հայրենի երգն ես դու մեր՝

Վերադարձած հայրենիք:

Դեմքիդ՝ տանջանքն է դրել

Անագորույն մի կնիք.—

Եվ հանճարի հեռակա

Հուրն է հանգչում ճակատիդ:

Ինչպես մարող ճաղագայթ

Արարատի գագաթին:

Դու աշխատանքն ես երգել,

Եվ քրտինքը մաճկալի—

Անջուր հանդեր ու հերկեր,

Սիրո երգեր անձկալի...

Դու պանդուխտի տարագիր

Սիրտն ես երգել կարոտով՝

Իբրև հեռու արագիլ

Կապված սիրո կարոտով: